

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Բաքմազ (բադաք) ծախողն ու սալդաթը

Սալդաթի մեկը մեկ դուքան մտավ,
Բաքմազ կուզեր նա առնի, ու տեսավ,
Ծախողի մեկ աչքն վաղուց քոռացել,
Ի՞նչ աներ սալդաթն, շատ քիչ էր փողն էլ:
Ընչանք բախկալը՝ իր քոռ աչքովը
Գրվանքա, կշեռք բաքմազն գդալով
Մեյդան կըբերեր, չափ ու ձև կաներ
Պակասն, ավելին գլխիցն վեր կառներ՝
Սալդաթի ձեռը փլավ չէր ուտում,
Ուրիշ մարդ էլ խոմ՝ չկար դուքանումն:
Մեկ շերեփ լիքը բաքմազ վերցըրեց,
Էնպես բախկալի սաղ աչքին խըփեց,
Որ ընչանք նա իր գլուխը լաց կըլեր,
Ռուսվա երեսն ու աչքը կըսրբեր,
Սալդաթն սաղ կճուճ բաքմազն վեր առավ,
Էն գնալն էր, որ գնաց, եդ չեկավ:

Բանն ընչանք բանի վերջը կհասնի,
Գողը՝ քարվանը կըտա կըտանի.
Թե աչքդ էլ քոռ է, սարհեսաբ բանիդ
Կա՛ց, թե չէ էլածը ջո՛ւր կըդառնա ձեռիդ: